ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ
ԵՒ ԴՐԱՄ
ՂՐԿԵԼՈՒ ՀԱՍՑԷ
M. BENIARD.
22, Ormiston Road,
Shepherd's Bush.
London, W. [Angleterre]

Ամէն բան ժողովրդի միջոցով, ժողովրդի կամքով եւ ժողովրդի համար:

Իրաւանշիւրի եւ ընդհանուրի հաւասարապէս բարեկեցիկ կեանքը — դա է ճշմարիտ ազատութիւն:

ԱՐԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՄԵՆ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ
ՏԱՐԵԿԱՆ . . . . . 5 ֆր.
ԿԷՍ ՏԱՐԻԱՆ . . . 3 „
ՄԻ ՀԱՄԱՐԸ . . . ½ „

Ժողովուրդ, դու ինքդ միայն կարող ես ձեռք բերել քո ազատութիւնը:

Արեան ճահիճներ — ահա ազատութեան ճանապարհը:

Ժողովուրդ, մի աղերսիր, այլ պահանջիր եւ ձեռք բեր

ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ — ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ | ԼՕՆԴՕՆ | Nr 1. ՄԱՅԻՍ. Nr 1. | 1897 | ՄԻԱՄՍԵԱՅ



„ԹԱԳԱՒՈՐ ԹԱԳԱՒՈՐԱՑ.“

Պառաւ տխմարը երբէք այդպիսի հարսանիք չէ ունեցել, ինչպէս հիմա: Իր ջէնէթական երազներում անգամ նա չէր կարող այնպէս պարել ուրախութիւնից, ինչպէս հիմա: Իր խալիֆայական փառամոլութեան տագնապում իսկ նա չէր յուսալ, — օ՜, երբէք — որ վեց Մեծն իր ոտքերի տակ ընկած, կը փաղաքշեն նրա կեղտոտ փեշքերը և կամ մոլեկան օլինբազութիւններով խմբապար կը կազմեն նրա հետ Մեծ Արջի սրինդի տարօրինակ ձայնի տակ:

Եւ սակայն այսօր դա իրականութիւն է:

Եւ հին մեծ երգչի, Հոմէրոսի, հերոս զաւակը, հելլէնական ժողովուրդը, դաւաճանուած ու խաբուած իր գլխին թագաւորող ցեղի և վեց Մեծի կողմից, ընդհանուր թշնամու վայրենի ու կատաղի յաղթութեան տակ կորացած, զսպում է իր կուտակուած զայրոյթը և կիսամեռ՝ իրան տեսնում ընկած պատերազմի դաշտում՝ անխնամ, մենակ ու անպատուած:

Եւրոպան հէնց այդ զոհն էր ուզում:

Ուզո՞ւմ... Ինչո՞ւ... Հելլէնական դրբոշակի պարտութիւնը չէ՞ արդեօք ամենակարճ միջոցը վերջ տալու այդ անիծուած Արևելեան Խնդրին ամբողջովին: Եւ այդ նպատակի համար չէ՞ արդեօք, որ նրանք գաղտնաբար գրգռեցին սուլթանին, օգնեցին ու օժանդակեցին նրան ջախջախելու Յոյնին... Եւ այդ սքանչելի գործն անելուց յետոյ և այդպիսով կարծելով թաղել Արևելեան Խնդիրը, բնական չէ՞ արդեօք, որ՝ մոռացած ամօթն՝ այդ հսկաները թզուկների պէս մարմնամարզական խաղեր հանեն իրանց անփոխարինելի թագաւորի, մարդասպան սուլթանի շուրջը:

Վերջ ի վերջոյ, չէ՞ որ այդ է նրանց շահը:

Եւ այդ իրողութիւնը թոյլ է տալիս սուլթանին հաւատացնել իր խաւար ժողովրդին, որ նա ոչ թէ միայն Յունաստանի դէմ է պատերազմել, այլ ամբողջ Եւրոպայի և... յաղթել է...

Յաղթել... Ամբողջ Եւրոպայի՞ն... Հարկաւ. տեսէք թէ ինչ ամբարտաւան ոճով է խօսում մեծ եպարգոսը և գրում՝ *Թիւրքական մամուլը: Կարծես ամբողջ աշխարհ իրանց ձեռքն են գցել: Կարծես սուլթանը „թագաւոր է թագաւորաց“:*

Աշխարհում մինչդեռ կան անկիւններ, որտեղից ողբն է աղաղակում: Դա՝ մայրն է, որ լալիս է իր զաւակի դիակի վրայ. դա՝ կինն է, որ սարսափած է իրան հասցրած անպատուութիւնից. դա՝ երեխան է, որ յուսահատ կանչում է իր մորթուած ծնողներին: Այդ ողբացողները և ողբացեալները խալիֆայի ու վեց Մեծի մարդախողխող, ազգակոտոր զոհաբերութիւններն են միւսիւլմանական կատաղի կուռքին և քրիստոնէական խարդախ Ոսկէ Հորթին: Ողբերով լի և վրէժից խելագար այդ անկիւններն են... Օ, չը տանք այդ անունները... դա հին աշխարհի նախկին պարծանքներն են... Այսօր խաբեբայ վեց Մեծերն անխիղճ կերպով ծաղրեցին հին Հելլադայի եւ Մինոսի եւ Հայաստանի ճակատագիրը, և գզուելի ախտով վարակուած Հիւանդ Մարդն իր ապականիչ մաղձը թափեց նրանց արեան մէջ:

Եւ այդ ամենը տեղի ունեցաւ 19-րդ դարու վերջերո՞ւմ... բուրժուազական քաղաքակրթութեան ամենահասուն միջոցի՞ն... Հէնց իսկապէս այդ միջոցին... Ազգերի եղբայրութեան ու մարդկային հասարակութեան ընդհանուր բաղդաւորութեան ու կատարեալ Ազատութեան յաղթանակի նախընթաց օրը... Հէնց իսկապէս այդ միջոցին... Դա հին ու նեխուած աշխարհն է, — Ցարիզմն ու Սուլթանիզմը, Կեսարութիւնն ու հին ազնուական Լորդութիւնը, ինքնադաւաճան Հանրապետութիւնն ու սնանկացած Ասպետականութիւնը, և այդ բոլորն էլ միասին կազմելով ընչաքաղց ու անսիրտ Բուրժուազիա, նրա ծուծն ու fine fleur-ը, — այդ հին ու նեխուած աշխարհն է, որ գնում կորչում է պատմական բեմից, իր հոգեւարքում թողնելով կտակ իրանից՝ մարդկային հեկատոմբներ, սուգ, աւերակներ...

Բայց կռիւն իր գործը կանէ... Պատմական դռան շէմքին է վերակենդանութիւնն ու յարութիւնը ժողովրդների, ազգերի, մարդկութեան...

Մէկերի մահը կը լինի պայման միւսների ծնունդի...

ՕՐՈՒՑ ԽՆԴԻՐՆԵՐ

Ֆրանսիական հաստատոր մամուլի երկու արժանաւոր ներկայացուցչերի մէջ.—

— Ստուած իմ, Ստուած իմ... ո՞վ է ասում, թէ սուլթանը բարի չէ: Տեղիս իր ներկայացուցչի միջոցով ահա նա ինձ տալիս է 20,000 ֆրանկ, որ իրան պաշտպանեմ Թուրքա-յունական տագնապի ամբողջ տեւողութեան միջոցին:

— 20,000?... Ա՜խ, թշուառական. ինձ տուել է միայն 10,000: Պէտք է վաղը ես գրեմ մի խիստ յարձակողական յօդուած այդ Հրէշի դէմ... Այն ժամանակ նա կը հասկանայ, թէ ինչ է նշանակում ինձ գնահատել կէս կերպով...

*
* *

Սուլթանի յատուկ պատուիրակը „յատուկ գործերի“ համար՝ գնում է այցելութեան ֆրանսիական մամուլի պարծանքներից մէկի մօտ, որը համայն աշխարհում նշանաւոր է իր անշահասիրութեամբ և Ազատութեան գաղափարին անկաշառ ծառայութեամբ: —

— Ձեր բարձր հանճարն ու դիրքը մեր վեհափառ սուլթանը վաղուց ի վեր գնահատում է... սկսում է Զիա փաշան:

— Գնահատո՞ւմ... սուլթա՞նը... մի՞թէ նա այդպիսի բաներ հասկանո՞ւմ է... չէ՞ կարողանում զսպել իր ծիծաղը մեծ Ֆրանսիացին...

— Վերջապէս 400,000 ֆրանկով կը գոհանա՞ք... կարճ է կտրում Զիան:

— Ինչո՞ւ չէ... ասում է Ֆրանսիացին և մի բոպէ կանգ առնում... Զիայի դէմքը յանկարծ փայլում է հրճուանքից... և դա երկու տեսակէտից... մանաւանդ նրա համար, որ սուլթանն այդ Ֆրանսիացու համար հրամայել է տալ 1,000,000 ֆրանկի կաշառք և... 600,000 շահում է... Զիան:

— Ինո՞ւ չէ, հարցում է Ֆրանսիացին քիչ կանգ առնելուց յետոյ. միայն մի պայմանով... Կրկին կանգ է առնում:

— Ի՞նչ:

— Դրամը ստանալուն պէս ես պէտք է հոչակեմ սուլթանին կաշառատու Ռէյնախ պանամիստի պետ և պիտի առաջարկեմ, որ նրան կախեն իբրև քրէական ամենամեծ յանցանաւորի...

Դրևակայեցէք Զիայի թթուած քիթ ու մռութը:

*
* *

Մի-մի Ֆրանսիացի, Անգլիացի, Իտալացի, Գերմանացի, Աւստրիացի և Ռուս հաւաքուած միասին՝ խօսակցում են օրուայ դէպքերի վրայ — յունա-թրքական տագնապի մասին...

— Ամեն պատճառ կայ երկիւղ ունենալու մեր ամենքիս վիճակի մասին.. ասում է Ֆրանսիացին:

ԵՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՑԵՐՏ.

Ռուսաստանի արինգի տակ հինգ մեծերը Մեծ Մարդասպանի հետ պարում և տօնում են Արևելեան խնդրի մարեցումը և փոքրիկ Ցուռնաստանի վրայ իրանց տարած յաղթանակը՝ շնորհով Խալիֆայի և յօգուտ Երա։

Հայաստան
Գրեկ
Չրեմատան

ԱՅԳԻՊՏ

ԻՏԱԼԻԱ

ՄԱՐԴԱՍՊԱՆԸ

ԱՒՍՏՐԻԱ
ՖՐԱՆՍԻԱ

ԳԵՐՄԱՆԻԱ

ՌՈՒՍԻԱ

— Հրմ... մրթմրթում է մտածելով Անգլիացին, կարծում եմ, որ դուք իրաւունք ունէք:

— Ինչպէս, ինչո՞ւ.. անհանգիստ բացականչում են միաժամանակ միւս չորսը, չէ՞ հասկանալով երկու խօսակցի միտքը...

— Փա՜հ, տէր իմ Աստուած... երկիւղ կայ, որ կոտորածները մեր ազգերի մէջ էլ կը սկսուին .. Չէ՞ որ ամբողջ Եւրօպայի պետն ու կառավարիչը հիմա սուլթան Մարդասպանն է...

— Դա կատարելապէս ճիշդ է՝ համաձայն խօսող բանականութեան, աւելացնում է Անգլիացին՝ նոյնպէս անտարբեր մտածելով...

*
* *

— Զարմանալի բան է, թէ ինչ աջողակ կերպով են գործում թիւրքական թնդանօթները թիւրք անկիրթ զօրքերի ձեռքը, բացականչում էր պարզամտի մէկը:

— Զարմանալու բան չը կայ: Տես. — թիւրքական թնդանօթի հոգին է Ռուսիան, ագին է Ֆրանսիան, խողովակը՝ Անգլիան, սրբողը՝ Իտալիան, ռումբ դնողը՝ Աւստրիան, պայթեցնողը՝ Գերմանիան... իսկ սուլթանը՝ ծաղրածու մասխարաձին, որ թէ նրանց է ծաղրում և թէ իրան... և թէ ամբողջ աշխարհին:

*
* *

Նոյն Զիան, Զիա փաշան, գնացել է Բիսմարկի մօտ նրան կաշառելու սուլթանի կողմից:

—Սուլթանը կարող է կօշիկներս փայլեցնել, հարցրել է պաղ կերպով երկաթէ Մարդը, շփոթութեան մէջ գցելով ողորմելի պատուիրակին... Եթէ կարող չէ, այն ժամանակ հաղորդեցէք նրան իմ բոլոր ողջոյններս, վերադարձրէք նրան դրամը և ասացէք, որ փայլեցել իմ կօշիկներս կամ իր երեսը միևնոյն արհեստն է, բայց դժուար արհեստ, որովհետև ես ինքս իմ երեսս բնաւ չը կարողացայ փայլեցնել:

Զիան այդ ժամանակ ակամայ նայեցաւ իր երեսը հայելու մէջ... Բիսմարկն իրաւունք ունէր Զիայի նկատմամբ ևս:

ԱԿՆՑԻՆԵՐԻ „ՏԻԵԶԵՐԱԿԱՆ“ ՄԻՈՒԹԻՒՆ.

„Ապտակի“ սատանայ լրաբերը ինչ որ տեղից ձեռք է ձգել հետևեալ նամակը որը „Հայք“ի խմբագիր Dr. Gabriel գրած է յայտնի դաւաճան Արփիար Արփիարեանի:

Մեծ. Արփիար էֆ. Արփիարեան.

Ջմեծաւ ուրախութեամբ ընկալայ զպատուական Թերթն Ձեր զ„Դրամ“ զոր զՁերդ Մեծապատուութիւն աղուէսի խորամանկութեամբ տառերը շրջելով հակառակ կողմը՝ շինած էր „Մարտ“. դորն ասեմ, որ այդտեղ զվարպետութիւնն Ակնցու և զՃիզուիթութիւնն կառթոլիկ Պօլսեցու խառնուած էին 'ի միմեանս, այնպէս, որպէս փքուն է զանուն իմ Թերթիս զոր յորջորջի „Հայք“ Հայկազն Թերթ: Ջուրախութիւնն իմ անդրաւական է, զոր մենք Արփիար էֆէնտի, հէմիշէրի ենք, զարմեցն Ամիրայից, որպէս զՄիւսիւ Ձերազ, խաբել զմիմիանս ոչ կարեմք, բայց համերաշխութեամբ ուրիշներին խիստ դիւրաւ...

Ծառանիդ զնամակովս խնդրէ զաջակցութիւնն Ձեր սակս Թերթին իմոյ, զոր զուտ Հայկազեան է, գտնել զբաժանորդս, զի այսպիսի մի պատուական Թերթ, զոր այժմ ի հաշիւ Ձեր ի Թերթի իմում կը պահարակեմ և կը հարուածեմ զնազարբէկ, որուն Դուք, ես և զՄիւսիւ-Ձերազ ոխերիմ թշնամիներ եմք, և թէպէտ այդ նազարբէկ յաղագս Ձեր և Տամատեանի յայտարարեց թէ Տաճիկ կառավարութեան լրտեսներ էք և մատնիչներ, բայց ըստ իս, նա իրաւունք չունէր այդ անելու, այնու զի, եթէ ես ալ ըլլայի Ձեր տեղը ի Կ. Պոլիս, ձեզմէ պակաս դեր չէի կատարեր ի պարծանս ազգիս Հայկազեան... Ես, „Տիեզերական Ապստամբութեան“ հիմնադիրս, հազարանգամ գրեալ եղէ ի Թերթի իմում, որպէսզի կազմեմք կեդրոնական վարիչ մարմին մը ճշմարիտ դիւանագէտ և կարող ազգայնով, և զորս կարենան աէրութեանց հետ հաղորդակցութիւն անել և գալ ի հասկցողութիւն. ասելիք չը կայ, որ այդպիսի վարիչ մարմնի մը գլուխը՝ տաղանդաւոր որմնադիրս և դիւանագէտս, Ձեր մեղաւոր ծառան պիտի լինէր, որով չէր կոտորուէր զազգն իմ Հայկազեան...

Ընդ գրութեամբ իմով յայտ առնեմ ձեզ զնորագիւտ խորհուրդն իմ, զոր յղացաւ զգբլուխն իմ կանկարաւոր ի շաբաթի վերջնում.

— Կազմել գաղտի ընկերութիւն մը, բաղկացեալ սակաւաթիւ անդամով, նուաստս, Դուք և Միւսիւ Ձերազ՝ երեք Անկցիներս, զչորրորդն եղիցի զՏիար Տամատեան, վասնզի, քանզի եթէ նա Ակնցի չէ, բայց ունի գերազանցող Պօլսեցիի և կաթոլիկ Ճիզվիթի յատկութիւններ: Անուանքն մեր եղիցին ծածուկ ի ժողովրդենէն, զնպատակ ընկերութեանս եղիցի խաբել զժողովուրդն ազգասիրական քողով, ըզգրպան նորա դարդակել, որով գաղտնի ընկերութիւն մեր տացէ մեզ զդրամս բազմս յաղագս սեփական գրպանաց մերոց, ըստ որում, դա մեր իրաւունքն է, որովհետև, վասնզի, քանզի մենք հրատարակեմք զուտ Ազգային և զուտ Հայկազն Թերթ: Զսկզբունքն իմ՝ գովել է զայնս, զորս զօգնութիւնս դրամական հասուցանեն իմ Տէրտիս: Այս տարի զեկամուտն „Հայք“ի է խիստ սակաւ, միայն երկու հարիւր ութ տօլար... Զզգայուն և զանզգայս, զգործաւորս և զվաճառականս, զուսեալս և զանուսս, զաղքատս և զմեծատունս այսչափ կրցած են անել „Հայք“-ին համար... զօտարամիտ և զաղնտաբեր Թերթքն ազգիս եղի ու մեղրի մէջ կը լողան, իսկ անաչառ և Հայկազն զ„Հայք“ ստիպուած է չարչարանքով, սոսկալի նեղութիւններով հրատարակուիլ:

Զայս բազումս ունեմ ես, Արփիար էֆէնտի, որ ընդ հուպ հասուցանիցէք ինձ զոյժ դրամական առ ի քաջալերութիւն, որպէսզի, մանաւանդ զի պէտք փառաբանեմ զձեզ ի Թերթի իմում, և հայհոյեմ զնազարբէկ... Մնամ Ձերում Մեծութեան նուաստ ծառայ

Dr. Gabriel.

Խմբագիր — „Տիեզերական ապստամբութեան“ և խմբագիր, — „Հայք“ Հայկազն Թերթի:

ԾԻԾԱՂ.

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԵՐԿՈՒ ՀԱՅ ՀԱՐՈՒՍՏՆԵՐԻ ՄԷՋ

— Ճիշդն ասած, ամաչում եմ, տեսնելով Ցոյն հարուստների այս աստիճան ոգևորութիւնը դէպի իրանց հայրենիքը: Նրանք ոչ թէ հազարներով, այլ միլիոններով են տալիս իրանց ազգային դատի համար, չեն խնայում ամեն ջանք...

— Ես կը զարմանամ, որ դուք Մարկոս Ապեր, այդքան հիացած էք Ցոյն հարուստների առաքինութեան համար. միթէ՞ մեր հարուստները պակաս ազգասէրներ են. դեռ անցեալ օր մօտ հարիւր հայ փախստականների համար ճաշ տուին Լօնդօնի մէջ, յետոյ հարկ եղած ժամանակ անգլիացիներին տուած ենք առատ կերպով որպէս զի հայերի համար միտինգներ գումարեն: Տէրտէրների, վարդապետների ամեն կերպ կօգնենք, ալ ի՞նչ կարող ենք ընել...

— Այո՛, բայց այդպիսի օգնութիւններ հայ ազգի ազատութեան գործի համար առանձին նշանակութիւն չունեն. հաւատացնում եմ քեզ, հաճի ադա, ես մինչև անգամ մի քանի հարիւր ոսկի կը տայի ազգիս, եթէ, մէկը պաշտօնական թղթերով երաշխաւորէր որ ապագայում առկոսով ինձ կը վերադարձնեն...

ՄԻՍԻՕՆԱՐԱՒԹԻՒՆ.

Ֆրանսացի մի յայտնի աստղագէտ վերջերս իր կատարած մանրազնին քննութիւնից յետոյ երևան բերաւ այն ենթադրութիւնը, որ Հրատ Մոլորակի մէջ մեզ նման արարածներ կան և որ նրանք աւելի զարգացած են մեզնից:

Այս լուրը մեծ ցնցում առաջ բերաւ Լօնդօնի Լօրտերի ժողովում, որտեղ Սալիսբրիի առաջարկութեան համաձայն քուէարկեցին իսկոյն հաղորդակցութեան մտնել Աստղի հետ և միսիօնարութիւն ուղարկել այնտեղ օդի միջով շուտով միացնելու համար այդ նոր երկիրը Մեծն Բրիտանիայի հետ...

ՍՈՒՏ — ՊԱՏԳԱՄԱՒՈՐԸ

Արդէն գիտէք, որ Մինաս Ձերազ 10-20 տարի շարունակ հրապարակապէս խաբում էր ամբողջ աշխարհին, թէ ինքը Բերլինի Վեհաժողովում պատգամաւոր էր և այդ պաշտօնոր խոշոր սուտը երբ մենք հրապարակ հանեցինք, նա ստիպուեցաւ խոստովանել իր անամօթ խաբեբայութիւնը և յայտարարել, որ ինքն չէ եղել պատգամաւոր, որ „նախկին-պատգամաւոր“ տիտղոսն այլ ևս չը պիտի դնէ իր թերթի ճակատը, ինչպէս նա անում էր այդ ամբողջ եօթ-ութ տարի: Բայց խաբեբայութիւնն արհեստ է. փոխիր աղուէսի մորթը, աղուէսը միշտ աղուէս է: Եւ ահա լսում ենք, որ դիւրութեամբ կարողանալու համար շարունակել իր արհեստը, որն իր պատմական կոչումն է, սուտ-պատգամաւորը վերջնականապէս արձանագրուել է անդամ ջեզուիտների ընկերութեան, որի սանն էր արդէն քսան տարիից ի վեր:

Սրտանց շնորհաւորում ենք. դրանից աւելի տաք ու յարմար տեղ նա չէր կարող գտնել իրան համար: Ամեն ձուլածք իր կաղապարն ունի:

ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

— „Ապտակ ստանալ, մատնիչ, դաւաճան, ազգադաւ մակդիրներով Պարիզի մէջ մի ժողովում, մարդավայել մէկի համար բարոյական մեծ մահ է“,

— Ա. Արփիարեան. ծօծրակը քորելով. այո, այո, անտարակոյս, բայց ատիկա բան մը չէ, ես Ապտակէն գոհ մնացի... կարող էին սպանել զիս, աղբար...

*
* *

Շնորհակալ եմ, թէ տան անուն ինձ մատնիչ,
կամ դրամակուլ ու վատնիչ,
կոչուիմ ազգիս դաւաճան,
Ստոր խարդախի ստացած ըլլամ աստիճան —
Շնորհակալ եմ, այդ ամենն ալ թուքին հետ
Ես կընդունիմ այսուհետ,
Լոկ իմ կաշիս չը գանեն,
Հոգիս բերնէս չը հանեն:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
Ծ Ր Ա Գ Ի Ր
ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ԵՐՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՑԱՌԵԼԻԱԾ՝ ԲԱՑԱԴՐԱԿԱՆ ՑՕԴՈՒԱԾՆԵՐ.
ԳԻՆԸ 1 ՖՐԱՆԿ.

„Ա Պ Տ Ա Կ“
ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ - ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ
(ՄԻԱՄՍԵԱՑ)
„Ապտակը“ մտնում է իր զոյութեան չորրորդ տարեշրջանը: Բաժանորդ գրվել ցանկացողներին խնդրում ենք առանց ուշացնելու դիմել „Ապտակի“ խմբագրութեան: „Ապտակի“ տարեկան բաժանորդագին է 5 Ֆրանկ:

ԼՕՆԴՕՆ· „ՀՆՉԱԿԻ“ ՏՊԱՐԱՆ·